

ընկալարանին մէջ՝ սկսաւ հետեւիլ այդ խառնիճաղանջ ժողովրդեան, որու ալեկոծ ընթացքին մէջէն որոտման ձայներ կ'ելնէին, կեցցէ Կոստանդին, կամ կեցցէ Երակլեակ աղաղակելով: Չաւեն աչքը շուրջ պտըտցնելով եւ տեսնելով այդ խուժանին փրփրած վիճակը որ քանի կ'երթար կը շատնար կատաղի եւ զինեալ խումբերով, ձեռքը գօտիին կը տաներ երկսայրի պատրաստ վիճակի մը մէջ դնելով, եւ այնպէս ժողովրդեան հետ մտաւ Մայր եկեղեցին, ուր գիշերվնէ բերուած էր կայսեր ոսկեղէն դագաղը եւ մէջտեղ դրուած բարձր արծաթեայ պատուանդաններ ու վրայ:— Վերջին անգամ մը տեսնելու Յամար այդ քաջին կերպարանքը, որուն դրօշակին տակ Նինուէի դաշտերուն մէջ պատերազմած էր, իւր կորովի բազուկներուն ուժ տուաւ եւ ճեղքելով ժողովուրդը անցաւ հասաւ մինչեւ թիկնապահաց խումբին կռնակը, որ շրջանակ մը կը կազմէին դագաղին չորս կողմը. հոն ականակապ պսակ ի գլուխ ծիրանիներու մէջ տեսաւ կապկի դիակը այն քաջին, զօր ինք պատերազմի դաշտին վրայ առիւծ մը տեսեր էր. զգուանք եկաւ իրեն, կը ռւզէր ետ քաշուիլ, երբ խումբ-խումբ պալատականաց փառաւոր ամբօխը սկսան շարուիլ կարգաւ դագաղին շուրջը. եւ ահա կայսրուհին Մարտինէ եւ հարազատ որդին Երակլեակ եւ թագաժառանգը Կոստանդին եկան իրենց պատրաստ եալ գահույից վրայ բարձրացան: Անմիջապէս եկեղեցական երգեր լսուեցան, եւ պատրիարքը կրօնական շքեղ խումբով հանգստեան կարգն սկսաւ կատարել: Չաւեն՝ լուրջ մարդ՝ այս հանդեսին պերճանաց վրայ աչք մը պտտցնելէ վերջ՝ սկսաւ դիտել այդ ամեն կերպարանքները. կը տեսնէր Մարտինէ, որ իւր խորթ որդուոյն վրայ այնպիսի աչքեր կը դարձներ, որ երկու թունաւոր սլաք կարելի էր համարեր կը տեսնէր Կոստանդին ժամանակէն առաջ ծերացեալ, աչվներուն լոյսը մարած, մարմնոյն կորովը կորած. իսկ Երակլեակ թեթեւ երիտասարդ հօրը դիակը չի տեսնելով՝ կանանց խումբին կը հառէր. պալատականք, սինկղիտոսք եւ բոլոր մեծամեծք իրենց նայուածքներէն, իրենց կերպարանքէն հա եանի կ'ընէին թէ աստուածային երգերուն ուշադրութենէ աւելի ուրիշ կարելոր մտածութիւնք ունէին իրենց գլխուն մէջ: Այս դիտողութեանց ժամանակ յանկարծ Չաւենի աչքին հանդիպեցաւ Թումայի կերպարանքը, որ թագաժառանգին մօտ կանգնած էր իւր հետեւորդաց մէջ: Կարծես նոր կեանք, նոր յոյս, նոր զօրութիւն առաւ Չաւեն. աչքերն այդ հրաշալի գմբեթին դարձնելով եւ միտքը գմբեթէն վեր թռչելով. «Փառք քեզ, աստուած, փառք քեզ»,— ըսաւ. եւ իբրեւ թէ Արփեսին թելերուն մէջ՝ իւր նժոյգին վրայ Յայաստանի ճամփան կ'երեւակաչէր թէ կը սլանար: Սիրտն ուրախութեամբ կը տրոփէր եւ աչքերը Թումայի վրայ տնկած՝ նորա ամեն ակնթարթը, ամեն շարժումնքը կը դիտէր, որ աչքէ չի կորսնցնէ:

Բայց սրտի առաջին յուզմունքն անցնելէն վերջ՝ մտածեց թէ, երբ հանդեսը վերջանար եւ Թումայ այդ արքունական ամբօխին հետ անհետ լինէր, ինք